

7.

Կաթողիկէսացիք գործածութիւնը:

Սակայն ազգին նաեւ կաթողիկէայ մասը երբեմն սոյն դաւանութիւնը կը գործածէ, այս ինքն ձեռնադրութեան ատեն բայց փոխելիները փոխելով, եւ անկէ աւելի ալ կը գործածէին՝ եթէ ձեռքերնին զանուած ժամակարգութիւնները մինակ Աջմիածնական Հայոց տպագրութեամբն ըլլար, ինչպէս է ցայժմ Չեռնազրութեանց գիրքը: Միսիթարեանց տպագրութիւնները հնագոյն մատեաններէն ըլլալով՝ որոնց մէջ չի գտնուիր ան հաւատոյ դաւանութիւնը, անանկ եղած է որ կաթողիկէայց քով մտցուած է կամ չէ մտած՝ նոյն ժամերգութենէն առաջ զըուցելու սովորութիւնը:

Ասկէ առաջ՝ 1677ին Հոռոմ Տարածման հաւատոյ տպարանը Հայոց Պատարագամատոցը տպուելով, ծայրը աւելցուած են “Սրբազրութիւնք աստուածային պաշտամանց Հայոց”, : Աս սրբազրութեանց ԾՆԷ զիւտոյն մէջ ազգարարութիւն ընելով որ “Աթէ մէկը ուզէ բսել խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ եւն. այսպէս ասասցէ. քանի մը բան մինակ կ'ուզուի օրինակի աղագաւ՝ փոխանակ բսելու “Միաւորեաց ընդ աստուածութեանն”, կ'ուզուի. “Միաւորեաց ընդ իւրում՝ աստուածութեանն”, որն որ արդէն նաեւ ձեռագրաց մէջ անանկ կը գտնուի. փոխանակ “Միաւորեալ մի բնութիւն”, բսելու՝ կ'ուզուի “(ի մի անձն) միաւորեալ յերկրոս բնութիւնս”, փոխանակ բսելու մինակ “բխեալ ի Հօրէ”, կ'ուզուի “բխեալ ի Հօրէ եւ յՈրդոյ”, :

Ըստ ստոյգ կերեւեալ որ ան ատենները ոչ ոք սուրբ Աթոռոյն աս դաւանութեան ծաղման վրայօք ստոյգ բան մը կրցած է հաղորդել: Բայց որովհետեւ հիմայ գիտենք թէ ուստի է, լուսազոյն կը համարէինք զրոց մերձաւոր քննութեան ատեն՝ ասոր մտադիր ըլլալ:

Վերոյիշեալ սրբազրութեանց մէջ քանի մը բան նաեւ մեր Նիկիական-Աթանասեան հանգանակին մէջ կ'ուզուի: Աս ուղղութենէն գրեթէ 40 տարի առաջ է որ Հոռոմ Հայոց Պատարագամատոցը տպուած ատեն՝ սոյն հանգանակին տեղ զրուած էր Ա-Պօլսի հանգանակը հայերէնով մը՝ որն որ անշուշտ կը վերաբերէր Յովհաննու Մոլինոսի՝ որն որ Տարածման հաւատոյ ժողովոյն թարգմանն էր: Բայց ետքէն երբ որ Ահհաստանի թագաւորութեան Հայոց պիտոյիցը համար՝ Հայոց եկեղեցական գրեանքը

¹ Այսինքն կաթողիկէայ Հայոց 1869ի սեւհոգոսն երբ վերստին շարունակուի: Ծ. Հրտ: